

ՏԱՐԱԾՔԱՅԻՆ ԱՆՀԱՄԱԶԱՓ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՔԱՆԱԿԱԿԱՆ «ԴԵՄՔԸ»

Հիմնաբառեր. տարածքային զարգացում, անհամաչափության գնահատում, Զինիի գործակից, զարգացման ընդհանրական ցուցիչ, գլխավոր բաղադրիչների եղանակ



Արմեն ՔԻՅՅԱՆ

Տնտեսագիտության
թեկնածու

2000 թ. ավարտել է ԵՊՏԻ-ն (այժմ՝ ՀՊՏՀ)՝ ստանալով տնտեսագետ մաթեմատիկոսի որակավորում, 2003 թ.՝ տնտեսագիտության թեկնածուի գիտական աստիճան: 2007-2016 թթ. դասավանդել է ՀՊՏՀ Գյումրու մասնաճյուղում: 2016-2017 թթ. ՀՊՏՀ «Ամբերդ» հեղափոխական կենտրոնում եղել է ծրագրի ղեկավար: 2017 թ. մինչ օրս զբաղեցնում է ՀՊՏՀ վիճակագրության ամբիոնի վարիչի պաշտոնը: Հեղինակ է ավելի քան 30 գիտական և հեղափոխական աշխատանքների:

Երկրի զարգացումը որոշվում է ոչ միայն տնտեսական կամ սոցիալական ներուժով, այլև դրա բաշխման հավասարաչափությամբ: Տարածքային համաչափ զարգացման մասին վերջին տարիներին շատ է խոսվում: Ինչո՞ւ է այս երևույթն այդքան կարևոր. յուրաքանչյուր բնակիչ պետք է հնարավորություն ունենա ապահովելու կյանքի որակի որոշակի նվազագույն մակարդակ՝ անկախ նրանից, թե երկրի որ հատվածում է բնակվում: Տարածքային զարգացման անհամաչափությունն ասելով նկատի է առնվում այն իրողությունը, որ մարդիկ թերզարգացած տարածքներից ձգտում են տեղափոխվել ավելի զարգացած տարածքներ կամ շրջաններ, ինչը մի կողմից հանգեցնում է երկրի խոշոր քաղաքներում բնակչության գերկենտրոնացմանը, իսկ մյուս կողմից՝ հիմնականում գյուղական կամ խոշոր քաղաքային կենտրոններից հեռու գտնվող բնակավայրերի աստիճանական դատարկմանը: Այս խնդիրը կարևորում են երկրների մեծամասնության կառավարությունները՝ դրա հաղթահարման ուղղությամբ մշակելով և իրագործելով տարածքային համաչափ զարգացման համապատասխան քաղաքականություններ:

Այս առումով, Հայաստանը նույնպես բացառություն չէ: Տարածքային անհամաչափ զարգացման խնդիրը մեզանում առանձնակի սրությամբ է դրված, ուստի այս ուղղությամբ արդյունավետ քաղաքականության մշակումն ու դրա իրականացումը շատ կարևոր են, մասնավորապես՝ երկրի կայուն զարգացման տեսանկյունից: Յուրաքանչյուր նմանօրինակ քաղաքականության մշակմանը պետք է նախորդի տարածքային զարգացման անհամաչափության մակարդակի համարժեք գնահա-

¹ <http://www.irttek.am/views/act.aspx?aid=98923>

տում, որի արդյունքը թույլ կտա լիարժեք պատկերացում կազմել զարգացման անհամաչափությունը պայմանավորող գործոնների, դրանց փոփոխման միտումների մասին:

«Շ տարածքային զարգացման անհամաչափության մակարդակի և միտումների գնահատման նպատակով կառուցել և հաշվարկել ենք տարածքային տնտեսությունների զարգացման մակարդակի միասնական ցուցանիշ (ինդեքս), որի արժեքների նկատմամբ կիրառել ենք տնտեսագիտության տեսությունից հայտնի Ջինիի բանաձևը՝ ստանալով «Շ տարածքային զարգացման անհամաչափության գնահատականներ: Հաշվարկներն ընդգրկում են 2001-2017 թթ. ընկած ժամանակահատվածը:

Տարածքային զարգացման միասնական ցուցչում ընդհանրացրել ենք տարածքային զարգացումը պայմանավորող հետևյալ ցուցանիշները.

1. համախառն արդյունքը մեկ շնչի հաշվով (հազ. դրամ). արդյունաբերության, շինարարության, գյուղատնտեսության և ծառայությունների ոլորտների համախառն արդյունքների հանրագումարը,
2. արդյունաբերության տեսակարար կշիռը համախառն արդյունքում,

3. մշակող արդյունաբերության տեսակարար կշիռն արդյունաբերական արտադրանքի կառուցվածքում,
4. միջին ամսական հարաբերական աշխատավարձը. միջին ամսական աշխատավարձի հարաբերությունը մարզում նվազագույն պարենային զամբյուղի արժեքին, որի կազմն ու կառուցվածքը հաշվարկվել են ըստ «Շ առողջապահության նախարարության մշակած չափորոշիչների,
5. սպառողական ծախսերը տնային տնտեսության մեկ անդամի հաշվով (ամսական),
6. սննդամթերքի վրա կատարվող ծախսերի տեսակարար կշիռն ընդհանուր սպառողական ծախսերում (%),
7. մեկ բնակչի ապահովվածությունը բնական կերտեով (ք.մ.),
8. գազաֆիկացված բնակելի տների և բնակարանների տեսակարար կշիռը մարզի բնակելի տների և բնակարանների ընդհանուր թվում,
9. գործազրկության մակարդակը,
10. նպաստառու ընտանիքների քանակը,
11. բնապահպանության վիճակի ցուցանիշը, որը հաշվարկվել է անշարժ աղբյուրներից մթնոլորտային արտանետումների (մարզի մեկ բնակչի և 1 ք. կմ-ի հաշ-

ԱՂՅՈՒՄԱԿ 1

Տարածքային զարգացման ցուցանիշների կշռային գործակիցները¹

	Ցուցանիշը	Կշիռը
1	Համախառն արդյունքը մեկ շնչի հաշվով	0,156
2	Արդյունաբերության կշիռը համախառն արդյունքում	0,074
3	Մշակող արդյունաբերության կշիռն արդյունաբերական արտադրանքի կառուցվածքում	0,038
4	Միջին ամսական հարաբերական աշխատավարձը	0,099
5	Սպառողական ծախսերը տնային տնտեսությունների մեկ անդամի հաշվով	0,125
6	Սննդամթերքի վրա կատարվող ծախսերի տես. կշիռը սպառողական ծախսերում	0,085
7	Մեկ բնակչի ապահովվածությունը բնական կերտեով	0,04
8	Գազաֆիկացված բնակարանների և բնակելի տների տես. կշիռն ընդհանուրի մեջ	0,06
9	Գործազրկության մակարդակը	0,074
10	Նպաստառու ընտանիքների քանակը	0,07
11	Բնապահպանության վիճակի գնահատականը	0,047
12	Բնակչության բնական աճը	0,041
13	Հանրակրթական դպրոցների աշակերտների թիվը՝ 1000 բնակչի հաշվով	0,039
14	Բժիշկների թվաքանակը՝ 10000 բնակչի հաշվով	0,050

¹Կշիռները հաշվարկվել են առաջին գլխավոր բաղադրիչի ձևափոխված մեթոդի կիրառմամբ: Առավել մանրամասն տե՛ս Айвазян С.А., Сравнительный анализ интегральных характеристик качества жизни населения субъектов РФ. М., ЦЭМИ РАН, 2001:

- վով) ցուցանիշների միջինացմամբ,
- 12. բնակչության բնական աճը՝ 1000 բնակչի հաշվով,
- 13. հանրակրթական դպրոցների աշակերտների թիվը՝ 1000 բնակչի հաշվով,
- 14. բժիշկների թվաքանակը՝ 10000 բնակչի հաշվով:

Տարածքային զարգացման միասնական ցուցանիշը ձևավորվել է ըստ հետևյալ կշռային գործակիցների (աղյուսակ 1):

Հիմք ընդունելով այս կշռային գործակիցները՝ հաշվարկվել են տարածքային զարգացման միասնական ցուցանիշի արժեքներն ըստ ՀՀ մարզերի (աղյուսակ 2):

Տարածքային զարգացման միասնական ցուցանիշով անվիճելի առաջատարը Երևանն է, որի և մարզերի միջև նույն ցուցանիշների տարբերությունը տարեցտարի մեծանում է: Զարգացման միջին մակարդակը 2001-2017 թթ. հանրապետությունում աճել է 120%-ով: Ավելի արագ աճ է արձանագրվել Երևանում, Արարատի, Լոռվա, Շիրակի և Սյունիքի մարզերում:

Տարածքային զարգացման միասնական ցուցանիշն օգտագործել ենք հանրապետությունում տարածքային զարգացման անհամաչափության աստիճանը և դրա փոփոխման միտումները հաշվարկելու համար: Այդ նպատակով օգտագործել ենք եկամուտների բաշխման անհավա-

սարության մակարդակը գնահատելու համար օգտագործվող Ջինիի գործակիցը, սակայն դրանում եկամուտների մեծության փոխարեն ներմուծել ենք տարածքային զարգացման համաթվի արժեքները: Ըստ այդմ՝ տարածքային զարգացման անհամաչափության գնահատման բանաձևն ունի հետևյալ տեսքը.

$$RDD = 1 + \frac{1}{N} - \frac{2}{N^2} y = [y_1 + 2y_2 + 3y_3 + \dots + N y_N], \quad (1)$$

որտեղ N-ը մարզերի (տարածքային միավորների, ներառյալ՝ Երևանը) թիվն է, y_k -ը k-րդ մարզի տարածքային զարգացման միասնական ցուցանիշի արժեքն է ($k=1,2,\dots,N$), ընդ որում, բանաձևում y_k մեծությունները ներառվում են նվազման կարգով, այսինքն՝ $y_1 \geq y_2 \geq y_3 \geq \dots \geq y_N$, y -ը տարածքային զարգացման միասնական ցուցանիշի միջին արժեքն է:

Քանի որ միասնական ցուցանիշի արժեքները պատկանում են բավականաչափ փոքր միջակայքի, ուստի դրանց հիման վրա ստացված արժեքներն ունեն փոքրինչ այլ չափողականություն, քան ավանդական եկամտային Ջինիի գործակիցը: Օրինակ՝ այնպիսի ենթադրյալ իրավիճակում, երբ միասնական ցուցանիշի արժեքը մարզերից առավել զարգացածում 0.900 է, իսկ մյուսներում՝ 0.100, ապա անհավասարաչափության գործակիցը մոտավոր-


ԱՂՅՈՒՍԱԿ 2

Տարածքային զարգացման միասնական ցուցանիշի արժեքները 2001-2017 թթ.

Մարզեր և Երևան	2001	2007	2012	2017	Աճը՝ 2001-2017 թթ. (%)
Երևան	0,329	0,557	0,621	0,723	120
Արագածոտն	0,304	0,431	0,486	0,506	66
Արարատ	0,300	0,500	0,581	0,673	124
Արմավիր	0,305	0,471	0,544	0,555	82
Գեղարքունիք	0,304	0,389	0,429	0,467	54
Լոռի	0,251	0,359	0,439	0,505	101
Կոտայք	0,317	0,446	0,507	0,571	80
Շիրակ	0,193	0,344	0,452	0,459	138
Սյունիք	0,271	0,491	0,586	0,676	150
Վայոց ձոր	0,325	0,465	0,500	0,564	73
Տավուշ	0,257	0,383	0,417	0,460	79
Պարզ միջինն ըստ մարզերի և Երևանի	0,287	0,439	0,506	0,560	120

ԳԾԱՊԱՏԿԵՐ 1

Տարածքային զարգացման անհամաչափությունը Հայաստանում



րապես հավասար կլինի 0.400-ի: Այսինքն՝ տեսականորեն սա կարող ենք համարել ցուցանիշի առավելագույն սահման, և ստացված արդյունքներն ավելի պատկերավոր դարձնելու համար դրանք նորմավորենք 0-0.400 միջակայքի համար:

Գծապատկերում RDD11 ցուցանիշն (1) ըստ բանաձևի հաշվարկված անհամաչափության գործակիցն է ՀՀ մարզերի և Երևան քաղաքի համար: Հաշվարկների արդյունքները ցույց են տալիս, որ ուսումնասիրվող տարիների ընթացքում տարածքային զարգացման անհամաչափությունը գնալով խորացել է, և RDD-11 գործակիցի ընդհանուր աճը շուրջ 25% է:

RDD-Y ցուցանիշով գնահատվել է տարածքային զարգացման անհամաչափության աստիճանը՝ որպես համեմատության հիմք ընդունելով ոչ թե տարածքային զարգացման միասնական ցուցանիշի միջին մեծությունը, այլ դրա առավելագույն արժեքը, որն արձանագրվել է Երևանում: Այսինքն՝ ցուցանիշը ցույց է տալիս տարածքային զարգացման բևեռացվածության աստիճանը Երևանի և 10 մարզերի միջև: Ստացված արդյունքները վկայում են, որ տարածքային զարգացման բևեռացվածությունը 2001-ից ի վեր աճել է 56%-ով: Ընդ որում, ցուցանիշի շարժընթացը որոշակի պարբերականություն է ցուցաբերում: Այսպես՝ մինչև 2007 թ. Երևանի և մարզերի միջև արձանագրվել է զարգացման մակարդակների բևեռացման խորացում, 2007-2010 թթ. տարածքային

զարգացման անհամաչափությունը որոշակիորեն նվազել է, սակայն 2010-ից՝ նոր թափով սկսել է խորանալ:

Այսպիսով՝ հաշվարկների արդյունքները ցույց են տալիս, որ Երևանի և մարզերի միջև զարգացման մակարդակների տարբերությունները գնալով ավելի ու ավելի են խորանում: Ընդ որում, մայրաքաղաքի և մյուս տարածքների զարգացման միջև առկա ճեղքվածքն ավելի մեծ արագությամբ սկսել է աճել 2010-ից հետո և 2017-ին հասել է իր առավելագույն մակարդակին: Սա նշանակում է, որ տարածքային համաչափ զարգացման ուղղությամբ նախկինում ձեռնարկված բոլոր քայլերը կամ պարզապես հայտարարությունների բնույթ են կրել, կամ էլ եղել են ոչ արդյունավետ:

Մյուս կողմից, Հայաստանի մարզերի զարգացման մակարդակների միջև տարբերությունները համեմատաբար փոքր են, և ուսումնասիրվող ամբողջ ժամանակահատվածում նշանակալի փոփոխություններ չեն գրանցվել: Հետևաբար՝ կարող ենք ասել, որ մեր երկրում տարածքային համաչափ զարգացում առկա է միայն մարզային մակարդակում: Երկրի սոցիալ-տնտեսական ռեսուրսներն ավելի ու ավելի են կենտրոնանում մայրաքաղաքում, իսկ մարզերում բնակչության կենսամակարդակների միջև տարբերությունները զգալի չեն և 2001 թ.-ից ի վեր էապես չեն փոխվել: